Ս14-Ա
22.12.2023թ

Ուսումնական նախագծի հաշվետվություն

Դասարան - 7-րդ Ա

Թեմա՝- ,Անտառի տնակումե ռեստորանի ճաշացանկ: Խոսքի մասեր

Ղեկավար – Էվելինա Կնյազյան

Ուսումնական նախագծի շրջանակներում անդրադարձ կատարվեց հայոց լեզվի կիրառման, մատուցման նորովի մեթոդներից մեկին՝ գործածելով ՏՀՏ գործիքներ և ծրագրավորման լեզու:

Մեթոդի կիրառման այս ձևը օգնեց արդեն ուսումնասիրած լեզվական գիտելիքների ամրապնդմանը, ստեղծագործական և օնլայն կարողությունների զարգացմանը: Աշակերտները խորացրին գիտելիքները խոսքի մասերի շուրջ, ձևավորեցին հետազոտություններ իրականացնելու և վերլուծելու կարողություններ, հայ և համաշխարհային գրական երկերը համադրելու , տրված աղբյուրների հետ ինքնուրույն աշխատելու , միմյանց հետ համագործակցելու, թվային և մեդիա կարողունակությունները զարգացնելու հմտություններ:

Աշկերտները խոսքի մասերը՝ Գոյական, Ածական, Թվական, դրանց մասին գիտելիքները ներկայացրին յուրօրինակ և ստեղծագործական մոտեցմամբ՝ հեքիաթային ռեստորանի ճաշացանկը և աշխատակիցների կերպարները ներկայացնելով: Կարողացան համագործակցել միմյանց հետ, ինքնուրույն համակարգել կատարած աշխատանքը՝ խմբի անդամներին համապատասխան դերային բաշխում կատարելով: Կատարեցին հետազոտություններ, քննարկումներ, ստեղծեցին իրենց սեփական նախագիծը, լեզվական գիտելիքների վերլուծությունը ներկայացրին ստեղծագործաբար:

Հաճախակի հանդիպումների ու քննարկումների արդյունքում հավաքագրած ինֆորմացիայի և լեզվական գիտելիքների հիման վրա աշակերտները պատրաստեցին սահիկաշար, որտեղ ներկայացված էր ողջ աշխատանքը նկարների և տեքստային աշխատանքների միջոցով / *վերլուծված էին գործածված խոսքի մասերի կիրառությունները*/: Պատրաստել էին նաև ռեստորանի էլեկտրոնային իրական էջ ծրագրավորման տարբեր լեզուների միջոցով:

Այսպիսով աշակերտները կարողացան արդյունավետորեն կիրառել լեզվական գիտելիքները խոսքի տարբեր ձևեր կազմելիս, ստեղծեցին կապ տարբեր առարկաների հետ՝ գրականություն և ինֆորմատիկա:

Աշխատանքը ներկայացնելուց հետո աշակերտները գնահատվեցին ըստ նախապես տրված գնահատման սանդղակի:

22.12.2023թ